Մ· ՎԱՐԱՆԴԵԱՆ ԳԱՇՆ· ԽԷՉՕԻ ՀԵՏ

(Նկարուած Փարիզ) Photo -- Braun, Paris

ԱՆՑԵԱԼ

I

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ապրիլ 26–ին, Մարսէյլում, կաթուածի հետեւանքով, վախճանուեց Հ. Յ. Դաշնակցութեան եւ, ընդհանրապէս, հայ մտաւորականութեան ներկայացուցիչներից մէկը՝ Մ. Վարանդեան, որ մօտ 40 տարի բացառիկ ջանասիրութեամբ ու փայլով ծառայեց հայ մշակոյթին ու հայկական դատին: Վարանդեանի մահը մեծ վիշտ պատճառեց, մանաւանդ, երիտասարդութեան, որի սիրելի դէմքերից էր նա, որի մտաւոր դաստիարակութեան այնքան շատ էր ծառայել նրա բեղմնաւոր գրիչը:

Զկարողանալով «Վէմ»–ի ներկայ համարում տալ Մ. Վարանդեանի կեանքի ու գործի նկարագրութիւնը՝ կը բաւականանանք միայն նրա նկարի հրատարակութեամբ: Յաջորդ անգամ նրան կը նուիրենք առանձին յօդուած:

II

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՄԱՆԵԱՆ

Մարտ մէկին, Երեւանում, սրտի երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, մեռել է Հայաստանի ականաւոր գիտնականներից մէկը՝ ճարտարապետ Թ. Թորոմանեան, որի կորուստը մեծ հարուած է հայ մշակոյթի համար: Թորոմանեանը հայ հին ճարտարապետութեան ամենահեղինակաւոր մասնագէտն էր մեր օրերում: Նրա ուսումնասիրութիւնների արժէքը, ինչպէս եւ իր գիտնականի համբաւը շատ աւելի լայն են, քան Հայաստանի սահմանները: «Վէմ»–ի յաջորդ համարում մենք կը տանք առանձին յօդուած Թորոմանեանի կեանքի եւ գործի մասին: